# ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ և ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/3---<<->>

ք. Արմավիր << >> << >> 2014 թ.

<<Նոր Ակունք>>ՓԲԸ-ն,ի դեմս միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ Ա.Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<__________________>> -ն, ի դեմս տնօրեն __________________________յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես

նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _______________ (_____________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ:

**5. Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի /Ստացողի/ կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացույցային օրը:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N 4/:

6.3 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: <<Ընդ որում, ապրանքների գնման դեպքում, բացառությամբ գյուղատնտեսական ապրանքների, գնման պայմանագիր կնքած անձը ներկայացնում է այդ ապրանքների ծեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Սակայն եթե այդ ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի կարող պահանջվել:>> Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ,,Նոր Ակունք,,ՓԲԸ<br>ՀՀ ք. Արմավիր,Մաշտոցի 59<br>Առեկսիմբանկ գազպրոմբանկերի խումբ<br>Հ/Հ2380020468820100<br>ՀՎՀՀ 04412802<br>,,Նոր Ակունք,,ՓԲԸ-ի<br>գլխավոր տնօրենի տեղական տեղակալ | |
| ____________________ Ա.Թորոսյան<br>Կ. Տ. | ________________<br>Կ. Տ. |

Հավելված N 1
<<____>> ______________ 2014թ. կնքված
N ՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-<<->>
գնման պայմանագրի

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

Պետական կառավարման մարմնի անվանումը

**,,Նոր Ակունք,,ՓԲԸ**

Ապրանքի, ծառայության անվանումը

**Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր**

| Չափաբաժնի համարը | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 1 | Ամրակ | Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ )մետաղական կամ պոլիմերային պատվածքով,33մմերկարությամբ:Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ, տուփի մեջ 100հատ ,<<Staples>> կամ համարժեք: |
| 2 | Կարիչի մետաղալարե կապեր | Գրասենյակային կարիչների N: 10/6մմ, տուփի մեջ 1000հատ, <<Kangaro>> կամ համարժեք: |
| 3 | Կարիչի մետաղալարե կապեր | Գրասենյակային կարիչների N: 24/6մմ, N: 26/6մմ տուփի մեջ 1000հատ, <<Kangaro>> կամ համարժեք: |
| 4 | Արագակար պլաստիկե | Երկարատև պահման գործերի համար,գունավոր, A 4(210297) մմ ձևաչափի թերթերի համար; |
| 5 | Գրիչ | գնդիկավոր 0.7մմ ծայրով ,,Faber- Castell" կամ համարժեք: |
| 6 | Դանակ գրասենյակային | 9x80մմ,պատյանը մետաղական,ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով,ծայրը մետաղական: |
| 7 | Թուղթ օֆսեթային | **Թուղթ A4 ֆորմատի**, Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 95% խտությունը 80գ/ք.մ. Փաթեթավորված կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ,փաթեթի քաշը 2.5կգ.:<<PAPER One>>կամ համարժեք: |
| 8 | Թուղթ օֆսեթային | **Թուղթ A3 ֆորմատի**, Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 297x420մմ միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 95% խտությունը 80գ/ք.մ. Փաթեթավորված կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը 5.0կգ.: <<PAPER One>>կամ համարժեք: |
| 9 | Թուղթ ֆաքսի/ժապավեն | Ֆաքսի թուղթ՝ գլանափաթեթված, լայնությունը՝ 210մմ, երկարությունը՝ 30մ, 210մմx12մմ, (20-30) մ կամ այլ: |
| 10 | Ծրար (չթափանցող) | Ծրարներ փոստային չթափանցող,եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, սպիտակությունը 90% խտությունը 80 գ/մ$^2$,առանց գրությունների,ինքնասոսնձվող, 115x225 չափի: |
| 11 | Կարիչ (ստեպլեր) | Կարիչ գրասենյակային փոքր՝ 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար: |
| 12 | Մատիտ/սովորական | Հասարակ, սև կամ գունավոր, համապատասխան |

| | | |
|---|---|---|
| | | կարծրությամբ: |
| 13 | Գծանշիչ (մարկեր) | Տարբեր գույնի,նախատեսված ընդգծումներ,նշումներ անելու համար,ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով: |
| 14 | Մկրատ օֆիսային | Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ: |
| 15 | Թուղթ նշումի | Չափերը 76x100մմ,կպչուն դեղին Թուղթ նշումների համար, չափերը 76x100մմ,կպչուն դեղին, տրցակներով: |
| 16 | Բաղադրանյութ (շտրիխ) | Ուղղիչ գրիչներ սպիտակ և արագ չորացող հեղուկ-նյութով;ուղղիչ միջոցներ կպչուն թղթյա ժապավենով; ուղղիչ միջոցներ 20մգ, <<RETYPE>> կամ համարժեք: |
| 17 | Ռետին (լաստիկ) | ՝6.5x2.2 <<Maped>> կամ համարժեքը, նախատեսված մատիտով գրվածքները մաքրելու համար: |
| 18 | Սեղմակ 25մմ | Մետաղական, լայնությունը 25մմ: |
| 19 | Ռեգիստր/թղթապանակ կոշտ կազմով | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով,համապատասխան չափի կռնակով(ծավալով),մետաղյա ամրացման հարմարանքով, A4(210x297)մմ ձևաչափի թղթերի համար: |
| 20 | Գիրք գրասենյակային,մատյան | Գրասենյակային գիրք,A4 ձևաչափի(210X297մմ)սպիտակությունը ոչ պակաս քան 70%,խտությունը 45-50գ/ք.մ. 70էջ: |
| 21 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ) | Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ: |
| 22 | Թղթապանակ (Ֆայլ) | Ֆայլ պոլիէթիլենային A4 ֆորմատի, թաղանթ 50 միկրոն,թափանցիկ,փաթեթում 100 հատ << IMPULSE>> կամ համարժեք: |
| 23 | Սոսինձ չոր | Չոր սոսինձ գրասենյակային(սոսնձամատիտ),թուղթ սոսնձելու համար չափագրված 35գ: |

* Մատակարարումը Ք.Արմավիր Մաշտոցի 59:

*Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:

**ԳՆՈՐԴ**

,,Նոր Ակունք,,ՓԲԸ
ՀՀ ք. Արմավիր,Մաշտոցի 59
Առեկսիմբանկ գազպրոմբանկերի խումբ
Հ/Հ 2380020468820100
ՀՎՀՀ 04412802
,,Նոր Ակունք,,ՓԲԸ-ի
գլխավոր տնօրենի տեղական տեղակալ

_____________________ Ա.Թորոսյան
Կ. Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

_____________________
Կ. Տ.

Հավելված N 2
<<____>> ______________ 2014թ. կնքված
N ՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-<<->>
գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2014թ. անհրաժեշտ գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի

(ՀՀ դրամ)

| Չափաբաժնի համարը | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2014թ | | | | | | | | Ընդամենը 2014թ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը /հազար դրամ/ | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Ամրակ | տուփ/ 100 հատ | | 17 | | 17 | | 18 | | 18 | | 70 | |
| 2 | Կարիչի մետաղալարե կապեր | տուփ/ 1000 հատ | | 15 | | 15 | | 15 | | 15 | | 60 | |
| 3 | Կարիչի մետաղալարե կապեր | տուփ/ 1000 հատ | | 15 | | 15 | | 15 | | 15 | | 60 | |
| 4 | Արագակար պլաստիկե | հատ | | 75 | | 75 | | 75 | | 75 | | 300 | |
| 5 | Գրիչ | հատ | | 100 | | 100 | | 100 | | 100 | | 400 | |
| 6 | Դանակ գրասենյակային | հատ | | 2 | | 2 | | 2 | | 2 | | 8 | |
| 7 | Թուղթ օֆսեթային A4 | տուփ/ 500 | | 120 | | 120 | | 120 | | 120 | | 480 | |
| 8 | Թուղթ օֆսեթային A3 | տուփ/ 500 | | 1 | | 1 | | 1 | | 2 | | 5 | |
| 9 | Թուղթ ֆաքսի | հատ | | 1 | | 1 | | 1 | | 1 | | 4 | |
| 10 | Ծրար (չթափանցող) | հատ | | 750 | | 750 | | 750 | | 750 | | 3000 | |
| 11 | Կարիչ (ստեպլեր) | հատ | | 3 | | 3 | | 3 | | 4 | | 13 | |
| 12 | Մատիտ | հատ | | 2 | | 2 | | 3 | | 3 | | 10 | |
| 13 | Գծանշիչ (մարկեր) | հատ | | 8 | | 8 | | 8 | | 8 | | 32 | |
| 14 | Մկրատ օֆիսային | հատ | | 3 | | 3 | | 4 | | 4 | | 14 | |
| 15 | Թուղթ նշումի | տուփ/ 100 թ | | 25 | | 25 | | 25 | | 25 | | 100 | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Բաղադրանյութ (շտրիխ) | հատ | | 8 | | 8 | | 9 | | 10 | | 35 | |
| 17 | Ռետին (լաստիկ) | հատ | | 5 | | 5 | | 5 | | 5 | | 20 | |
| 18 | Սեղմակ 25մմ | տուփ | | 75 | | 75 | | 75 | | 75 | | 300 | |
| 19 | Ռեգիստր/թղթապանակ կոշտ կազմով | հատ | | 55 | | 55 | | 55 | | 55 | | 220 | |
| 20 | Գիրք գրասենյակային | Հատ/70թերթ | | 15 | | 15 | | 15 | | 15 | | 60 | |
| 21 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն (սկոչ) | հատ | | 40 | | 40 | | 40 | | 40 | | 160 | |
| 22 | Թղթապանակ (Ֆայլ) | հատ | | 3500 | | 3500 | | 3500 | | 3500 | | 14000 | |
| 23 | Սոսինձ չոր | հատ | | 6 | | 6 | | 6 | | 6 | | 24 | |

**ԳՆՈՐԴ**

,,Նոր Ակունք,,ՓԲԸ
ՀՀ ք. Արմավիր,Մաշտոցի 59
Առեկսիմբանկ գազպրոմբանկերի խումբ
Հ/Հ 2380020468820100
ՀՎՀՀ 04412802
,,Նոր Ակունք,,ՓԲԸ-ի
գլխավոր տնօրենի տեղական տեղակալ

____________________ Ա.Թորոսյան
Կ. Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

____________________
Կ. Տ.

Հավելված N 3
2014 թ. կնքված
N ՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-
գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

2014թ. անհրաժեշտ գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի

ՀՀ դրամ

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. ըստ եռամսյակների՝ ընդ որում | | | | Ընդամենը 2014թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի | 25% | 50% | 75% | 100% | 100% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

,,Նոր Ակունք,,ՓԲԸ
ՀՀ ք. Արմավիր,Մաշտոցի 59
Առեկսիմբանկ-գազպրոմբանկի խումբ
ՀՀ 2380020468820100
ՀՎՀՀ 04412802
,,Նոր Ակունք,,ՓԲԸ-ի
գլխավոր տնօրենի տեղական տեղակալ

____________________ Ա.Թորոսյան
Կ. Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

Կ. Տ.

Հավելված N 4
<<____>> ______________ 2014 թ. կնքված
N ՆԱ-ՇՀԱՊՁԲ-11/3-<<->>
գնման պայմանագրի

Կատարող
_______________
_______________
_______________
գտնվելու վայրը_______________
հհ_______________
_______________
հվհհ_______________

Պատվիրատու
_______________
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ_______________
_______________
հվհհ_______________

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

"__" "_________" 201 թ.

Պայմանագրի անվանումը՝_______________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ "__ " "______________________" 201 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս____________________________________________________ և Կատարողը՝ ի դեմս_____________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը "__" "_________" 201 թ–ից "__" "_________" 201 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքներն հանձնեց
_______________
/ստորագրություն/
ազգանուն
Կ.Տ.

Աշխատանքներն ընդունեց
_______________
/ստորագրություն/
ազգանուն
Կ.Տ.

# ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈւԹՅՈւՆ N

ք. Արմավիր <<______>>______________20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման <<--- ---/--->> ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման N -----/---- գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ------------------թվերով------------------ (------------------------------տառերով--------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## 2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ.________________-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>
<<Մասնակցի հասցեն>>
<<Մասնակցի բանկի անվանումը>>
Հ/Հ
ՀՎՀՀ

տնօրեն՝ ---------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

## Դ Ի Մ Ո Ւ Մ
## գ ն մ ա ն   ը ն թ ա ց ա կ ա ր գ ի ն   մ ա ս ն ա կ ց ե լ ու

_________________________________________________հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից <<--- ---/--->> ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի ........................................ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

համապատասխան ներկայացնում է հայտը:

_________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

__________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե>>:

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

______________________________________________ ____________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____________________20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

# Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<--- ---/--->> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

______________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափաբաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

***3-րդ սյունյակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

______________________________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

______________
(ստորագրությունը)

Կ. Տ.

______________20 թ.
(ամսաթիվը, ամիսը)